

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերոս—անձնագրութիւններ. —ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Ներկվայ ժողովի արարութեան
տակ. Թանգութիւն Սիւրիւնի գաւառամասում.
Ռուսաց զորամասիկան ներկայացուցները. Նա-
մակ Հին-Նախիջևանից. Նամակ Նախագործիւն.
Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վեր-
ջին տեղեկութիւններ. Գերմանական խնամակա-
նութիւնը. Պատերազմ. Նամակ թիւրքայից. Ար-
տաքին լուրեր. —ՀԵՌԱՊԵՐՆԵՐ. —ԲՈՐՈՍԱ. —
ՅԱՅԱՍԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գը-
րական աշխարհից.

ՀԵՐՈՍ — ԱՆՁՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այն մեծ և ոգևորված համակրական
ցոյցները, որով լուսաւորված երկիրները
նորոգել են հիւսիսային բերրի համար-
ձակ ծանապարհորդ դօկտոր Նանսէնին,
մեզ յիշեցնում են այն հիացումը, որ մենք
տաճում ենք դէպի Կուկ, Վասկո դէ Գա-
մա և այլ նշանաւոր ծանապարհորդները,
որոնց շնորհիւ լայնացած մեր աշխարհա-
յեացքը երկրագնդի մասին: Նանսէն այցե-
լից և Պետերբուրգ: Կայսերական աշխար-
հագրական ընկերութիւնը ընդունեց նրան
հազուադէպ ոգևորութեամբ. հանդիսական-
ները սրտաբուլիս ողջոյններով և ծափա-
րուծիւններով յայտնեցին իրանց հիացու-
մը անվան և անձնագր՝ սկսնդիւնակացուն,
որ ամենամեծ դժուարութիւններով
թափանցեց սառնամանիքների խորքը և
կարողացաւ հասնել մինչև լայնութեան 86
աստիճանը, որից յետոյ արդէն քիչ է մը-
նացել մինչև բուն բեռնը, և այդպիսով
յոյս տուեց, որ իսկական բեռնը հասնելու
ծրագիրը այլ ևս ցնորք չէ, այլ հաւանա-
կան նպատակ:

Նանսէնի բերած բազմաթիւ իրերը,
նիւթերը, արած գիտողութիւնները դեռ
չեն երթարկվել ամերիկական գիտական
քննութեան և հետազոտութեան: Նրանց
կարգի բերելու համար անհրաժեշտ են

Թէ ժամանակ և թէ լուրջ մասնագիտա-
կան ոյժեր: Այդ հետազոտութիւնը արդէն
սկսված է և մենք կարող ենք յոյս ունե-
նալ, որ նրա շնորհիւ մենք վերջապէս
ամբողջ գաղափար կը կազմենք մեր եր-
կրագնդի մասին, այն մուրախի մասին,
որի վրա ապրում ենք և որտեղից մենք
ուսումնասիրում ենք ուրիշ մուրախների
արտաքին կազմութիւնը և տիեզերքի խոր-
քերը:

Նանսէնի նման անձնագրութիւնները ո-
գևորիչ են: Նրանց տոկոսն, անընկճելի և
յամառ ձգտումը դէպի իրանց առաջ դրած
նպատակների իրագործումը—ներշնչում է
և եռանդ մարդկանց մէջ: Այդ տեսակ անհատ-
ները հերոսներ են, որոնց կեանքը անձ-
նութիւնութեան և տոկոսնութեան տեսակէտից
կարող է կրթիչ ներդրութիւն անել ամ-
բողջ սերունդների վրա: Եւ մեր ժամանակը
երբ նոր սերունդի մէջ հազուադէպ են
դարձել հերոսներ, երբ ձրագով պէտք է
որոնել նպատակի համար կեանքը զոհող
անհատներ, երբ քաղաքական, հասարակա-
կան և գիտական ամեն տեսակ նպատակ-
ներից վեր է դրվում խաղաղ, հան-
գիստ, միատեսակ կեանքը—Նանսէնի նը-
ման անհատները ձիշող որ պատկերանում
են իբրեւ հերոսներ, որոնց պէտք է հե-
տեւել և նմանվել...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԺՈՂՈՎԻՍՏԱՆԻՍՏԱՆԻՍՏԱՆ

Մանր տպագրութեան տակ դուրս եկանք
ապրիլի 26-ին՝ դուռնայի դահլիճից: Թուով էր,
թէ մի քանի ժամ գործ ենք դրել ոչ թէ հա-
տարակալան հիմնարկութեան համար, այլ ա-
յալադիւն, անվերջ գործադրութեան համար, այն
էլ անհամ և անգրգռելի...

Մեր ընկերութիւնների ժողովներում շատ ենք

եղել նոյն իսկ շատ բուռն, լարված և սուր
վիճաբանութիւնների ենք ակնառնտես եղել. բայց,
որքան յիշում ենք, ոչ մէկը այնքան յոյնեցնող
չէ եղել, ինչպէս, օրինակ, Բարեգործական ըն-
կերութեան երեկվայ ժողովը, որտեղ ամեն
ինչ իր վրա կրում էր դատարկութեան և յոգնա-
ծութեան կնիք.—յոյնած ձայներ, յոյնած դէմ-
քեր, կցկտուր վիճաբանութիւններ, բացակայու-
թիւն լուրջ, համոզված վէճի, խմբամիջներ,
ցանկութիւն՝ անպատճառ մի բան ասելու, ան-
պատճառ ժամանակ խելու... Նրեակայել կա-
րող էք,—մարդիկ այնքան մանրամասն, որ թոյլ
տան իրանց վերկենալ և ճառ խօսել, թէ, օ-
րինակ, խորհրդի քարտուղարը նախագահական
սեղանի մօտ պիտի նստի, թէ չորս քայլ հեռու,
կամ թէ արդեօք նրա դէմքը մշտածի՞նք է, թէ
մոռալապատ... Իսկ մի այդպիսի վարկուր խնդ-
րով ժողովը դարձեցրեց մի նայ խմբագիր, —
գուշակում էք, ի հարկէ, որ պ. Ասետիկ Արասիա-
նեանցն է դա,—համոզված, որ դրանով վարկուր
ժառանգութիւն է մատուցանում ազգին... Կամ
երեակայել կարող էք, որ մի «Տեղեկագիր» տը-
ղալով լինի այն ձևով և այնպիսի «առանձ-
նապատկութիւններով», որ փոխանակ հեշտացնե-
լու անդամներին ծանօթանալու գործերի հետ,
աւելի խճճի, աւելի միջնացի գործը, առաջ բե-
րելով անվերջ, անթիւ հարցապարտումներ,
որոնց պատասխանել չէին կարողանում ոչ
խորհրդի անտեղեկան ներկայացուցիչները, ոչ ժո-
ղովի այս անգամ շատ թոյլ նախագահը, ոչ հա-
շիւ կարգադրերը, ոչ էլ վարստուղող յանձնա-
ժողովի խտտալիզու անդամները...

Եւ ժամը 8-ին սկսված ժողովը՝ այդ ճանճա-
ցուցիչ շաղկապ տեսց համարեա մինչև գիշերվայ
ժամը 1-ը: Իհնէ, երեակայելէք, ընթերցող, թէ
ինչ գլխով և ինչ ջղերով պէտք է դուրս գայիք
մենք՝ «անմեղ մեղաւոր» անդամներս՝ դուռնայի
դահլիճից: Եւ դեռ այսօր, երեքշաբթի էլ, մեզ
հրաւիրել են նոյն դահլիճը, դուցէ նոյն տան-
նեցներին ենթարկելու...

Բաղադրել դեռ տառանդում էր, նա առօրեայ
հատարակ մարդկանց կողքին, գուցէ և ակամայ,
բայց դարձեալ դնում էր նաև շէկալիքեան հա-
ւաքակա՛ն տիպեր, ինչպէս են՝ Եօթն Գրան-
դիէ, քեռի Գորիօ և այլն, իսկ Յոյները այդ
տիպերը պահպանեց միայն իր պատմական «Սա-
լամբո» դիւթի վէպի համար, որտեղ չըջալայրի
ընդարձակութիւնը, և միտքով անտրոյթիւնը
(Վարթագէն) լայն ապագայ էին բացել նրա
Ֆանտազիայի առաջ և թոյլ էին տալիս այն-
պիսի վիթխարի ոյժեր ստեղծել, ինչպէս էին
Մալթոն, Սահարարիւր, Համիլիարը:

Չափազանց հետաքրքիր մի պատմութիւն է
նախորդալիստ վիպագրութեան պատմութիւնը:
Նրա նշանաւոր ներկայացուցիչները, մէկը միւսի
չարժանակողը, մէկը միւսին կատարելագործողը,
լրացնողներն են եղել: Կարծես, մի գիտական
սխտեմայի հետ գործ ունենք: Ջարմանայի հե-
տնողութիւնով, բայց առ քայլ, կարող ենք անց-
նել Բաղադրելի դեռ թոյլ նկարներէ մինչև Զո-
լայի նրբանկար պատկերները: Բաղադրել, Յո-
բերի գործին պակասում էր նրբութիւն, փափ-
կութիւն, մի տեսակ մեղամաղձոտ դրական
զգայնութիւն: Նրանց միջավայրը չէր խօսում
մեզ հետ, նրանց ծաղիկները բուրմունքները
չէին համարում ընթերցողին, գոյները չէին հա-
րաւածում նրա հայեացքը: Նկարագրութիւնը չոր
ու ցամաք էր, ինչպէս մի ձեռնարկ: Գոհուր
եղալայները իրանց հիւանդական դիւրաբարգու-
թիւնով պիտի ոգի ներշնչէին չըջալայրին: Եւ
այս մի մեծ գործ էր, առանց որիս դժուար է
հասկանալ միջավայրի ազդեցութիւնը մարդու
վրա: Հոգով դեղաբուստապաշտ, նկարիչ և կոյ-
լէկցիւնիստ (հաւաքողներ), նրանք սովորել էին
ուշ դարձնել ամենափոքր մանրամասնութիւն-
ները, գոյները նրանաների վրա: Այս ընդու-
նակութիւնը, ասենք իսկոյն, այս կիրքը նրանք
մտքին իրանց բռնանք մէջ, և այս պատճառով
նրանց բռնանքները մի առանձին մեղամաղձոտ
փափկութեան կնիք են կրում իրանց վրա: Միւս
կողմից՝ աւելի ևս մանրամասնելով չըջալայրի

ԹԱՆԳՈՒԹԻՒՆ ՍԻՍԻԱՆԻ ԳԱՒԱՌԱՍԱՍՈՒՄ

(Թղթակցութիւն)

Ապրիլի 20-ին

Վերջին տեղեկութիւնները տարափելի գոյնե-
րով են նկարագրում Ջանդեղուրի Սիսիան գա-
ւառամասի ժողովրդի տնտեսական դրութիւնը:
Այս գաւառամասը, որ 18 տարում, ութսունա-
կան թեւականից դէտը, ոչ միայն չը կարողա-
ցաւ մի քիչ բարւոքել իր տնտեսական վիճակը,
այլ անցեալ տարվայ հացի պակասութեան
պատճառով բոլորովին քայքայվեց: Ժողովրդի
ապրուստի միակ աղբիւրը հողն է,—նրանց
ստացած հացը, այն էլ դժբաղդ դեղացին ամեն
տարի պարտքով է ձեռք բերում: Արեւմտ ինչ-
պէս չը յուսաւորվի: Ուտելու բան չը կայ ոչ
մարդկանց և ոչ էլ տաւարի համար: Մարտ ամ-
սին ձիւնը հալվել, բացվել էր գետինը, ոչխարը
դաշտ էր դնում արածելու: դժբաղդաբար դե-
ղացու այդ յուսաւորվին էլ կարվեց,—ապրիլի
սկզբներին տեղեցող մեծ քանակութեամբ ձիւնը
պատճառով: Մարեր կայա են, հաղորդակցու-
թիւնը Հին-Նախիջևանի հետ, որտեղից կարող
էին ալիւր բերել, անկարելի է:

Ինչ աշխարհ սկզբին դիւրացնելից ոմանք
ցրվեցին Ջանդեղուրի պանազան գիւղերը մինչև
գարուն իրանց զուրկ պահելու համար: Ետներ
էլ, մասնաւոր 10 տարեկանից սկսած մինչև
20 տարեկան տղաներ, շտապեցին Բագու՝ մշա-
կութիւն անելու: Բունակութիւն պէս մեծ գիւղը
որ երբեմն հացի շտեմարան է եղել ամբողջ
մասալի համար, այսօր, վերջին աղբաւորու-
թեան հասած, մինչև վերջ պարտքի մէջ խրված,
չը գիտէ ուր և ում գիտէ: Յորենի սօմարը 3
րուբլով չէ գանձում, այս քաղէին կան տներ,
որոնք մի հուցեմու ալիւր չունեն: Դարձանի
կեազը 30 ռուբլի է: Ի՞նչան եղանքն ու կիթ
կովերը մեծ մասով ծախվել են 5 ռուբլով
կամ կոտորվել: Անցեալ տարեկան 50 տոմար
սերմ ցանողը անցեալ աշնան 15 սօմար էլ չէ
ցանել. շատերն էլ մնացել են առանց սերմի,

նկարագրութիւնը, նրանք պէտք է աւելի ևս
մանրացնէին իրանց հեղուկները, որոնք, չնորհիւ
մեղմացրած միջավայրի, նեարդային են, դիւրա-
թեւ և ընկճվող: Տեսէք Յանդանիս եղալայները,
տեսէք Ժերմինի Լաւերտիւն, Բընէ Մօլլարան,
Մաղամ Ժերմինի,—ինչ զգայուն արարածներ,
ինչպէս են ընկճվում, թեքում նրանք պատահա-
նեղի առաջ:

Այսպէս մի մեծ սկզբունք դեկավարել է միշտ
դրական վիպասաններին,—այդ՝ միջավայրին
սուած ահալին, միանգամայն իշխող նշանա-
կութիւնն է: Այս է այն գիտական հիմունքը, ո-
րով նախորդալիստ վիպագրութեան «նորոգութեան»
մեծանշան անունն է ստացել: Բաղադրել ժամա-
նակ մի մեծ շարժում էր ծագել բնագիտութեան
մէջ: Լամարկը, Մանտիշիէր, Գեօթէն սկսել էին
ուսումնասիրել բնական էվոլյուցիան (կերպա-
րանափոխութիւնը) կենդանիների սերունդների մէջ՝
չըջալայրի ազդեցութեան ներքոյ: Նիլէ կենդանի-
ները կարող են կերպարանափոխ լինել կլիմայի,
հողի, ջրի, կերակրի ազդեցութեան ներքոյ, և
նոյն իսկ ընդմիշտ սպառնւել—մեռնել, ինչպէս
ցոյց էին տալիս մեծ Կրիվիի դարմանալի դե-
տեքը, ինչի ուրեմն նոյն տարրերը չը պէտք է
հիմնական կերպով աղեն մարդու վրա,—նրա
ֆիզիկայի, հոգեկան աշխարհի վրա:

Եւ մարդը, իր ուղեղով, իր սրտով, իր հոգով
միջավայրի գերին, կամ ճիշդ ասած, նրա ծը-
նունդն է դառնում: Միջավայրը մի սոսկալի
ոյժ է, որին ոչինչ չէ կարող դիմադրել: Այսպէս,
մարդու կաշկանդված, ամեն քաղ պէտք է զգայ
իր վրա օդի, հողի, շրջապատող իրերի, այն
սենեակի, որի մէջ նստած է, այն երեխայի, որի
հետ խօսում է, մի կտոր հացի, մի տեսարանի,
մի ծագիլի անդամադրելի ոյժ! L'homme est
determinee par le milieu (մարդը միջավայրի
արդիւնք է) ասում է Զօլան:

Նախորդալիստ մարդու մէջ չէ ենթադրում
ոչ կամք, ոչ ինքնուրոյնութիւն: Այս նսեմաց-
նում է մարդուն և այս չափազանցման մէջ է
գուցէ այս ուղղութեան «թուլութիւնը»: Սակայն

ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

ԷՄԻԼ ԶՈԼԱ ԵՒ ՆՐԱ ՈՒՂՈՒԹԻՒՆԸ
(«Paris» վէպի առիթով)

I

Մի սովորական բան է դարձել կրկնել, թէ
նախորդալիստ Վիստը է, նախորդալիստ մե-
ռած է: Այս լուրն է արդէն քանակից տարուց
ի վեր, այն օրից, երբ Բրիւնտիեր առաջին
քաղքից Զօլայի դէմ Ասում են նոյնպէս, որ
միայն այս բռնախառն գործը տաղանդն է,
որ դեռ կանգուն է պահում նախորդալիստի,
կամ ինչպէս ասում են, բէպիստ գպրոցի
խախտ չէնք: Դուցէ այդպէս է: Բայց այդ
չէնքը դեռ կանգուն է, գործը և սպառնա-
լից, դրականութեան լայն հրապարակի վրա և
նրա ոսկեգոծ գրուրը իր բացաւառ ճառագայթ-
ներով դեռ շրջնում է մեր աչքերը:

Նախորդալիստի հայրը համարվում է մեծ Բալ-
զակը, որը 1830 թւին յանկարծ իր սուր և կո-
պիտ գրչով յարձակվեց Վիկտոր Հիւգօյի «Հեր-
նանի» դրամայի վրա, հարուածելով նրա մէջ
բոմբաստիւմը, իր անբնականութեան և չինոսու-
թեան հետ միասին: Մի խորը, ներքին համոզ-
մունք, կամքի մի մեծ ոյժ էր հարկաւոր յան-
գնելու ասիոյան դուրս գալ ժամանակակից այս
գրական կուռքի դէմ, որի առաջ խոնարհվում
էին բոլոր գրողները, որը տօն էր տալիս ամ-
բողջ գրականութեանը:

Բայց ո՞վ էր Բալզակը: Մի բէպիստ, որ նա-
ւում էր կեանքի, ինչպիսի, բարոյականութեան
լուս գործնական մարդու, այսպէս ասած՝ սուր
դիմանակների աչքերով, դուռն այս յաւակնութիւն
ունէր նա, ինչպէս ունեն ընդեր նախորդալիստ-
ները: Մտաւալ հասակից ընկած կեանքի բովի
մէջ քաշ տալով իր տաղանդը հրատարակչե-
րի չէմբերում, միշտ մի կտոր հացի ետեւից ըն-

կած, նախորդալիստ չկույսի հայրը վաղ կտոր-
վեց վերացական աշխարհից, ուր սառնասուն
էին Վիկտոր Հիւգօնեք և սովորեց իր շուրջը
նայել, ուսումնասիրել իր չըջալայրող մարդ-
կանց, նրանց ընտանեկան, հասարակական և
քաղաքական կեանքը և այսպիսով ցոյց տալ յե-
տագայ սերունդներին «Թէ ինչ է եղել Պարիզը
միապետութեան ներքոյ: Ահա նրա «Կեանքի
նիւթերը», որոնց Զօլան պիտի անուանափոխէր
«Կեանքի դոկումենտներ», պիտի ձօնացնէր իր
մեծ, դիտող տաղանդի ոյժով, կապել գիտու-
թեան կապերով և կապել մի ամբողջութիւն,
որպէս զի իր կողմից տայ մեզ մի ուրիշ ժա-
մանակակա «երկրորդ կայսրութեան» բարդ նկա-
րագիրը: Մի ուրիշ աւելի մեծ տաղանդ, որը
նախորդալիստի սիւնն էր, այդ—Յօբերն է, «Տի-
կին Բօլարի»-ի և «Սալարմա»-ի հեղափոխ
դիմակը: Յօբերը չըջալայրի նկարագրութիւնը
դարմանալի ճշդութեան և մանրամասնութեան
հասցրեց, բայց դրա հետ միասին նա մտա-
մարդու հոգու խորքերը, և աշխատեց բանալ իր
հերոսների ուղեղի ու սրտի ծաղերը: Յօբերը
իր «Տիկին Բօլարի» վէպում հանդիսանում
է իբրեւ մի խոշոր հոգեգետ. նա կարողացաւ
ցոյց տալ մեզ՝ հասարակ և մահականացու-
նեք իրանց մանր ու խոշոր հոգեկան շարժում-
ներով: Այսպէս, միջավայրի մանրակրկիտ նկա-
րագրութիւն, մարդու մանրակրկիտ ուսումնա-
սիրութիւն,—ահա Յօբերի գործը: Այս կիրքը
դէպի մանրամասնութիւնները, որը անխուսա-
լիկ կերպով պէտք է սահմանափակել ուսումն-
ասիրելի չըջալայրը, պէտք է փոքրացնել, այ-
սինքն առօրեայ, banal գործնէր նաև գործող
անձերին: Եւ հերոսները փոքրացան: Տիկին Բո-
լարին միջակ գգայնութեան, միջակ խելքի տէր
կին է. բոլիւ Բօլարին մի թուրակազմ, սահմա-
նափակ էակ է. Բուլար ու Պէկիւշէն—խղճուկ-
կան Վիկտոր Հիւգօյի Սուլիէի և առհասարակ բո-
մանտիկների անբնական, արտախաղ հերոսները,
Շէկալիլի համամարդկային վիթխարի տիպերը:

